ՀՈՒՇ-ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ անվանի պատմաբան, արխիվային գործի մեծ երախտավոր Աշոտ Հովսեփի Հարությունյանի ծննդյան 90-ամյակը: Այդ տարելիցին էր նվիրված այն հուշ-հանդիսությունը, որը վերջերս կազմակերպել էր ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչությունը:

Հանրապետության պետարխիվների կենտրոնական մասնաշենքի նիստերի դահլիճը լեփլեցուն էր: Այստեղ էին հավաքվել անվանի պատմաբաններ, Երևանի առաջատար ԲՈՒՀ-երի դասախոսներ, Ա. Հարությունյանի զավակները, մարտական ընկերներն ու գործընկերները, արխիվային ոլորտի աշխատողներ: Եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու հայրենասեր գիտնականին, արխիվային գործի անխոնջ կազմակերպչի հիշատակին:

Նիստերի դահլիճի հարևանությամբ կազմակերպվել էր Ա. Հարությունյանի կյանքին ու գործունեությանը նվիրված փաստաթղթերի ընդարձակ ցուցադրություն՝ ուսումնառության տարիներին, Հայրենական մեծ պատերազմին նրա մասնակցությանը վերաբերող, աշխատանքային, գիտական գործունեությունն արտացոլող բնօրինակ փաստաթղթեր, լուսանկարներ, հեղինակած մենագրություններ:

Հուշ-հանդիսությունում ելույթ ունեցողներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր տեսլականը Ա. Հարությունյան մարդու, մարտիկի, հետազոտող գիտնականի, հասարակական գործչի, արխիվային գործի կազմակերպչի, ընտանիքի հոր և ընկերոջ մասին: Ամբիոնից հնչած դնահատանքի, պատմվածի և ասվածի, ցուցադրությունում տեղ գտած փաստաթղթերի ընտրանու միջոցով համակողմանիորեն ներկայացվեց այն գործչի կերպարը, որն իր ապրած ոչ լրիվ 75 տարիներից 55-ը՝ գիտակից-ինքնուրույն կյանքի չեմը ոտք գնելու պահից ի վեր, ամբողջովին նվիրաբերեց ծառայելու հարազատ երկրին ու ժողովրդին:

Միաբերան էին բոլորը, որ Ա. Հարությունյանն այն մարդկանց թվին էր պատկանում, որը չնայած կյանքի բեկ-բեկ ընթացքին ու ահեղ ալեբախումներին՝ մանկավարժական աշխատանք, բանակ, պատերազմ, դիտական, կառավարչական-կազմակերպական գործունեություն, գործել է նպատակամղված, իմացել է ինչ է ուզում կյանքից և ինչ կարող է տալ կյանքին, այն մարդկանց թվին, որին որտեղ էլ առաջնորդած լիներ ճակատագիրը, արել է իր ուժերի ներածի առավելագույնը:

Ուսման ծարավը ուղեկցել է նրան ողջ կյանքում: Հատկանշական է, որ որտեղ, երբ և ինչ հաստատությունում սովորած լիներ՝ սկսած իր հայրենի Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի տարրական դպրոցից, մինչև Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն ու զինվորական հաստատությունները, որոնց թվում և Մոսկվայի Ֆրունզեի անվան

ռազմական ակադեմիայի դասընթացները, բոլորն առանց բացառության. Ա. Հարությունյանն ավարտել է գերազանց գնահատականներով, իսկ մի քանիսն էլ ժամկետից շուտ՝ էքստեռն կարգով:

Որտեղ, երբ և ինչ կազմակերպությունում, ասպարեզում աշխատելիս կամ գործելիս լիներ, ամենուրեք արժանացել է բարձր գնահատանքի: Իսկ աշխատել սկսել է 1930 թվականից, երբ Գորիսի մանկավարժական տեխնիկումի նորավարտ դեռևս 19-ը չբոլորած սանը, սովորողի նստարանը փոխարինում է դպրոցի տնօրենի պատասխանատու աշխատանքով: Այնուհետև ավելի քան քառորդ դար զտնվելով զինվորական ծառայության մեջ դառնում է խորհրդային բանակի աչքի ընկնող մարտական հրամանատարներից մեկը: Ահա նրա ծառայողական բնութագրերից մեկը, տրված 1940 թ. Կարմիր բանակի քաղկազմի պահեստայինների դասընթացներն ավարտելու կապակցությամբ. «...կարգապահ է, օրինակելի, վճռական, պահանջկոտ իր նկատմամբ, հնդինակություն է վայելում սովորողների և հրամանատարների շրջանում, ունի շնորհակալագիր գերազանց ուսման համար...»:

Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: 1941թ. հուլիսից Ա. Հարությունյանը գործող բանակում է՝ 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի գնդերից մեկում: Մասնակցում է Հյուսիս Կովկասյան, ապա նաև Հարավարևմտյան, 2-րդ Ուկրաինական ռազմաճակատների ստորաբաժանումների կողմից մղվող կատաղի մարտերին, աչքի ընկնում անձնական խիզախությամբ, արժանանում մարտական մի շարք պարգևների: Հատկապես նշանակալից էին 1942թ. դեկտեմբերին Մոզդոկի ուղղությամբ՝ Բեզրուկովոյի շրջանում, Կուրանում և 1943թ. նոյեմբերին Դնեպրի գետանցի համար ծավալված թեժ պատերազմական գործողությունները, որոնց ժամանակ նա երկու անգամ վիրավորվում է, որից մեկ անդամը ծանր: Այդ վճռորոշ մարտերում Ա. Հարությունյանի մասնակցության մասին այսպես էր գրում 409-րդ դիվիզիայի կուսհանձնաժողովի քարտուղար Գուլյանը. «1943թ. նոյեմբերին գիվիզիայի զորամասերը կրնկակոխ հետապնդելով թշնամուն, զրոհով մոտեցան Դնեպրի ձախ ափին: Գունդը, որտեղ ծառայում էր Ա. Հարությունյանը, նրա ղեկավարությամբ կարողացավ իրագործել գետանցը, թշնամին հակագրոհներ կազմակերպեց տանկերի օգնությամբ: Երկու օր ու գիշեր թեժ մարտեր էին գնում Մալայա Աննովկայի երեք բարձրունքների շրջանում: Ծանր վիրավորված և արյունաքամ լինող կոմիսարը չթողեց մարտադաշտը այնքան ժամանակ, մինչև որ հրետանային-տանկային թարմ ուժերը օգնության հասան...»:

Ա. Հարությունյանը բանակին հրաժեշտ է տալիս 1963 թ. հունվարին: Խորհրդային Միության կրկնակի հերոս, բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Դրագունսկին անձնական երաշխավորությամբ հատուկ նամակով դիմում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանին, բանակից գնդապետի աստիճանով զորացրված, կայացած պատմաբան Աշոտ Հարությունյանին աշխատանքի ընդունելու ակադեմիայի պատմության ինստիտուտում: Իսկ նա, իրոք, արդեն կայացած պատմաբան էր. ծառայելով բանակում նա հասցրել էր էքստեռն կարգով ավարտել Երևանի պետական համալսարանին առընթեր ասպիրան-

տուրայի գասընթացները և պաշտպանելով գիտական թեզ, ստանալ պատմական գիտությունների թեկնածուի աստիճան (1950թ.): Ա. Հարությունյանը նույն 1963 թ. հունվարին նշանակվեց ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արխիվային վարչության պետ և իր կյանքի վերջին շուրջ քառորդ դարն անմնացորդ, այս բառի բուն նշանակությամբ, նվիրեց արխիվային գործի կազմակերպմանն ու զարգացմանը: Մեծ կենսափորձը, կազմակերպական ունակությունները, գիտական զգալի պաշարն ու անհագուրդ ծարավը Հայրենի պատմության նկատմամբ թույլ տվեցին նրան ամենակարճ միջոցում տիրապետել, չնայած ծանոթ, բայց և միանգամայն ուրույն ոլորտի, բոլոր յուրահատկություններին ու նրբություններին, դառնալ Հանրապետությունում արխիվային գործի զարգացման գլխավոր լոկոմոտիվը:

Այս ասպարեզում նվաճված բնագծերը զգալի էին, տեսանելի, շոշափելի, մնայուն այն չափով և աստիճանի, որ առ այսօր արխիվային աշխատողները, Հանրապետության պատմաբաններն ու արխիվների հետ երբևիցե առնչվողները չեն կարող Աշոտ Հարությունյանի անունը տալիս դրվատանքի և երախտիքի ինքնաբուխ խոսքեր չասել նրա հիշատակին: Հենց այսպիսին էին Հանդիսությունում հնչած ելույթներից շատերը՝ սթափ դնահատանքի հետ միաժամանակ՝ զգացմունքային: Նշում էին Ա. Հարությունյանի կյանքի և գործի կանգուն հուշարձանների, ամենից առաջ նրա անձնական ջանքերով հիմնված նորաստեղծ պետարխիվների, դրանց հոյակերտ շենքերի մասին, առանց որոնց արխիվային գործի զարգացման մասին խոսք լինել չէր կարող:

Անուրանալի է նաև Ա. Հարությունյանի գիտական վաստակը՝ պատմագիտական ծավալուն ուսումնասիրություններ, հրապարակված արժեքավոր մենագրություններ, գիտական հոդվածներ, այդ թվում՝ արխիվագիտական: Դրանցից մասնավորապես հիշատակելի են դեռևս նրա կենդանության օրոք լույս տեսած «Կովկասյան ռազմաճակատը 1914-1917թթ.», «Սովետական Միության նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակով» (Խորհրդային միության մարշալ Հովհ. Բաղրամյանի առաջաբանով), «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները» և էլի 7 անուն մենագրություններ: Նրան բախտ չվիճակվեց հրատարակված տեսնելու զորավար Անդրանիկին նվիրված շուրջ 30 մամուլանոց խիստ արժեքավոր ուսումնասիրությունը, որն այսօր էլ դեռ սպասում է իր հրատարակչին: Եվ այս ամենը դրված գերազանցապես առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստաթղթերի հիմքով: Նա առաջիններից մեկն էր, որ ձեռնամուխ եղավ ազգային մեծերի, որոնց թվում և զորավար Անդրանիկի կյանքի և գործի լուսաբանմանը: Նրա նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ կազմվեցին և լույս ընծայվեցին փաստաթղթերի արժեքավոր մի շարք ժողովածուներ: Այդ դործերը նրան՝ արժանի հեղինակություն, համբավ ու համակրանք էին բերում ժողովրդի, պատմագիտության անեղծ մշակների շրջանում: Սակայն նա այդպես էլ տպագրված չտեսավ «Զորավար Անդրանիկ. փաստաթղթեր և նյութեր» ժողովածուն, որը լույս տեսավ նրա մահից 5 տարի անց միայն: Բայց Ա. Հարությունյանը շարունակ խրախուսանք և քաջալերանք էր ստանում

նշանավոր մարդկանցից, որոնց թվում նաև Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բագրամյանից և նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովից:

Հայկ Բժշկյանց – Գային նվիրված փաստաթղթերի ժողովածուի լույս ընծայման կապակցությամբ (1971թ.) Գայի դուստր Թամարան Աշոտ Հարությունյանին ուղղված նրախտիքով լի նամակում գրում էր. «Ես անսահման շնորհակալ եմ Ձեզանից «Բանբեր արխիվների» հանդեսի համարը ուղարկելու և առավել շնորհակալ եմ Ձեր կողմից կատարված աշխատանքի՝ իմ հոր մասին լուրջ պատմական գրքի լույս ընծայման համար... Ես միշտ նրագում էի այդ մասին... Ես երջանիկ եմ, որ այդ ամենը հրապարակված է և այդ մասին կիմանան մարդիկ... Եվ դա Ձեր և Ձեր գլխավորած կոլեկտիվի շնորհիվ...»:

Հանրապետության գլխավոր արխիվագետը մեծ հեղինակություն էր վայելում նաև միութենական մասշտաբով: "Советские архивы" համամիութենական դիտական հանդեսը Ա. Հարությունյանի մահախոսականում գրում էր. «Երկրի արխիվիստները բարձր էին դասում Աշոտ Օսիպիչի կազմակերպչական ունակությունները, նրան ներհատուկ քաղաքացիական պարտքը, նրա անբավարարվածությունը ձեռքբերումներով, էնտուզիազմն ու նախաձեռնությունը աշխատանքում, տեսական ու գործնական խոր գիտելիքները արխիվային գործում»: Որ դա, իրոք այդպես էր, երևում է թեկուզ այն բանից, որ այսօր էլ Ռուսաստանում լույս ընծայվող հիմնարար արխիվագիտական աշխատանքներում անպայմանորեն օգտագործվում են նաև նրա արխիվագիտական ժառանգությունը կազմող հոդվածներն ու գործերը: Վկա՝ անվանի արխիվագետ Ն. Վ. Ավտոկրատովի Մոսկվայում վերջերս լույս ընծայած արխիվագիտության վերաբերյալ ուսումնասիրությունը:

Այսօր, տարիների հեռվից, ավելի է արժեվորվում Աշոտ Հարությունյանի գիտական ժառանգությունը, նրա կատարած կազմակերպական գործը:

ՍԵՐԳԵՅ ԱՄԻՐՅԱՆ